ԳՐՔԻ <<ՁՄԵՌԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ>>

<<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիրի, Քոլեջի, <<Գրադարանային գործ> բաժնի ուսանող՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԵՎԻԿ

Փետրվարի 19-ին,գրքի տոնին ընդառաջ new mag հրատարակչությունը կազմակերպել էր Գրքի <<Զմեռային փառատոն>>:
Փառատոնի շրջանակում տեղի ունեցավ նոր լույս տեսած ութ գրքի շնորհանդես, նաև տարբեր թեմաների շուրջ պանելային քննարկումներ:

Մենք՝ գրադարանավարներս, մասնակցեցինք <<Հայաստանն ու Բուշն անձամբ>> գրքի շնորհանդեսին, հեղինակ՝Սուրեն Սարգսյան: Ներկա էին արվեստի ներկայացուցիչներ,հյուրեր: Ներկայացրեցին, քնարկեցին գիրքը, լսվեցին հետաքրքիր կարծիքներ :

Մասնակցեցինք նաև <<ՏՏ ոլորտը Հայաստանում>> պանելային քննարկմանը: Շատ հետաքրքիր քննարկում էր, նաև, կարծում եմ, կարևոր մեր երկրի զարգացման համար:

Միջոցառումը կայացավ Կոնգրես հյուրանոցում: Տաղավարներում վաճառում էին բազմաբովանդակ, ժամանակակից գրքեր:

Եղան հեղինակներ,որ նվիրեցին իրենց հեղինակային գիրքը:

Հազեցած օր էր՝ հաճելի մթնոլորտով: